ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/20» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս.Ասլանյան
Հանձնաժողովի անդամներ՝ Կ.Գրիգորյան, Մ.Ներսիսյան, Ն.Աբելյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Վ.Մեժունց
Բացակայում է՝ Տ.Սարգսյան

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնման ընթացակարգի փաստաթղթերը գնահատելու մասին

(Ս.Ասլանյան)

1. **Փաստաթղթերի գնահատման՝**

- վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321/1 սենյակ, -օրը՝ 08.10.2019 թ., -ժամը՝ 11:00

1.1 Ընդունել ի գիտություն, որ Ասմիդա ՍՊԸ-ն սահմանված ժամկետում 9-րդ չափաբաժնի մասով չի շտկել անհամապատասխանությունը /ապրանքների տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին/: Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետև՝ Կարգ/ 48-րդ կետի 2-րդ մասի դրույթով՝ որոշեց 9-րդ չափաբաժնի մասով մերժել Ասմիդա ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

9. Չափաբաժին

Ըստ տեխնիկական առաջադրանքի

Տեսակը LED լուսատուներ, Օգտագործման նպատակը Արտաքին լուսավորություն, Հզորությունը, Վտ 45 վտ, կամ համարժեք հզորության նվազագույն լուսային հոսքով՝4500 լմ, Լույսի բաշխման կորը Կիսաձավալային 140 o, Լարման տիրույթը 180 - 250 Վ, Լուսատվության արդյունավետությունը ≥100 լմ/Վտ, Գունափոխանցման ինդեքսը Ra≥ 75, Ջերմաստիճանային տիրույթը -30 0C –ից մինչև +40 0C, Շահագործման ժամկետը ≥30,000 ժամ, Գունային ջերմաստիճանը 4000 K, Ֆլիկերի թույլատրելի աստիճանը ≤ 5%, Հզորության գործակից(cosφ) ≥ 0.9, Ներթափանցման պաշտպանությունը դասը (IP) բոլոր լուսատուների համար, IP65 – ից ոչ ցածր, Մեխանիկական պաշտպանությունը դասը (IK) IK07 –ից ոչ ցածր, Իրանի նյութը Ալյումինի ձուլվածք, Լուսատուների ուղղահայաց կարգավորում Կարգավորվող, Լուսատուների մոնտաժման պոչամասի տրամագիծը (մմ) ≤ 50, Լուսահոսքի կորուստը Ոչ ավել 20 % 50000 ժամից հետո, Երաշխիքային ժամկետ Նվազագույնը 5 տարի, Հզորության թույլատրելի շեղումը ± 5%:

Ըստ մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը

LED Լուսատու LPR-50W-4000K-M SMD Slim Հզորությունը – 50վատ, Գունային աստիճանը – 4000K, Շահագործման ժամեկտը 30000 ժամ լարման տիրույթը – 200-240 Վ, Ջերմաստիճանային տիրույթը -40 ^{0}C –ից մինչև +50 ^{0}C, պաշտպանությունը աստիճան IP 65, Հզորության գործակիցը

(cosφ) 0.95, Գունափոխանցման ինդեքսը Ra≥ 75, Ֆլիկերի , աստիճանը ≤ 5% իրանի նյութը ալյումինի ձուլվածք, Մեխանիկական պաշտպանությունը դասը IK07, Լուսատուների ուղղահայաց կարգավորում Կարգավորվող, Լուսային հոսք 4500 լում., Լույսի բաշխման կորը –Կոր, նախատեսված է արտաքին լուսավորության համար: Լուսատուների մոնտաժման պոչամասի տրամագիծը (մմ) ≤ 30, Հաճախականությունը 50 հերց, երաշխիքային ժամկետը 3 տարի:

Անհամապատասխանությունը

Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ուսումնասիրելիս պարզվել է, որ առաջարկվում է LED լուսարձակ (LED прожектор) LED լուսատուի (LED лампа) փոխարեն: Բացի դա չի համապատասխանում երաշիքային ժամկետը՝ 5 տարվա փոխարեն 3 տարի: Հզորության շեղումը ± 5%- փոխարեն 10 % է:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4 դեմ-0

2. 9-րդ չափաբաժնի մասով ՏԵԽԷՆԵՐԳԱՇԻՆ ՍՊԸ-ին <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը

Ընդունվել է որոշում՝ կողմ-4 դեմ-0

Հանձնաժողովի նախագահ՝		Ս.Ասլանյան
Անդամներ՝	----------	Տ.Սարգսյան
		Ն.Աբեյան
		Կ.Գրիգորյան
		Մ.Ներսիսյան
Համակարգող՝		Վ. Մեժունց